# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բամբակաշատ, (0237)79299, bambakashat.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 մայիսի 2016թվականի N 27

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐՆ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի N 1066-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 7-րդ և 9-րդ կետերով, հիմք ընդունելով համայնքի մի խումբ բնակիչների դիմումները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Բամբակաշատ համայնքում ցածրարժեք հողատեսքերը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքերի՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումը սահմանված կարգով հինգ օրվա ընթացքում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանում:
3.Սույն որոշմամբ իրականացված հողատեսքերի փոփոխումն սահմանված կարգով արտացոլել յուրաքանչյուր տարվա համար կազմվող համայնքի հողային հաշվեկշռում:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԲԱԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2016թ. Մայիսի 04,
գ.Բամբակաշատ

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի
Բամբակաշատ գյուղական համայնքի
ղեկավարի 2016թվականի Մայիսի 04-ի
Թիվ 27 որոշման

# Ց ՈՒ Ց Ա Կ

## ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԳԱՐՆԱՆԸ ՀԻՄՆՎԱԾ ՆՈՐԱՏՈՒՆԿ ԽԱՂՈՂԻ ԱՅԳԻՆԵՐԻ

| Հ/հ | Հողի կոդը | Ազգանուն,անուն, հայրանուն | Սեփ. հա | Խաղող | Ծի-րան | Դեղձ | Սա-լոր | Կեռաս | Խըն-ձոր | Տանձ | Ժամանակահատվածը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 291-007 | Հայրապետյան Բագրատ Ազատի | 0.25 | 0.25 | | | | | | | 2016թ. գարն |
| 2 | 274-001 | Հայրապետյան Զաքար Ռուբիկի | 0.60 | 0.60 | | | | | | | 2016թ. գարն |
| 3 | 279-005 | Գրիգորյան Վիկտոր Գալուստի | 0.565 | 0.565 | | | | | | | 2016թ. գարն |
| 4 | 279-004 | Գրիգորյան Վիկտոր Գալուստի | 0.28 | 0.28 | | | | | | | 2016թ. գարն |
| | | Ընդամենը | 1.695 | 1.695 | | | | | | | |

ԲԱՄԲԱԿԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բամբակաշատ, (0237)79299, bambakashat.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 մայիսի 2016թվականի N 28

## ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրանց գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի սեպտեմբերի 13-ի «Համայնքային նշանակության փողոցների վերանվանման մասին» թիվ 01 որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքի բնակիչ Արա Արտավազդի Ալեքսանյանին տնամերձ հողամասին /ծածկագիր 0069-0007/ և տանը տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայքի 16 փողոց, թիվ 02 բնակելի տան:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանում՝ պետական գրանցման համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԲԱԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2016թ.Մայիսի 26,
գ.Բամբակաշատ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բամբակաշատ, (0237)79299, bambakashat.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 մայիսի 2016թվականի N 29

## ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրանց գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի սեպտեմբերի 13-ի «Համայնքային նշանակության փողոցների վերանվանման մասին» թիվ 01 որոշումը

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքի բնակիչ՝ Արա Արտավազդի Ալեքսանյանին պատկանող տնամերձ հողամասին /ծածկագիր 0100-0008/ տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքի 22/2 փողոց, թիվ 7 տնամերձ հողամաս:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանում՝ պետական գրանցման համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՓԻԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2016թ.Մայիսի 26,
գ.Բամբակաշատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բամբակաշատ, (0237)79299, bambakashat.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 մայիսի 2016թվականի N 30

## ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՍՏԱՏՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնքի բնակիչ՝ Արա Ալեքսանյանը դիմել է Բամբակաշատ համայնքի 16 փողոց թիվ 2 տան հասցեում գտնվող 0.25 հա օրինական հողամասի վրա կառուցված բնակելի տան և շենք-շինությունների նկատմամբ իրավունքները վերականգնելու խնդրանքով, որը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ կառույցը իրականացվել է մինչև 01.05.2001 թվականը և դրա պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով,չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնքի 16 փողոց 2 տան հասցեում գտնվող բնակելի տան և շենք շինությունների նկատմամբ քաղաքացի՝ Արա Արտավազդի Ալեքսանյանին ծնված 13.01.1957 թվականին,ժառանգությամբ ձեռք բերված տան գույքային իրավունքները ճանաչելով նրա սեփականության իրավունքը 0.25 հա օրինական հողամասի վրա գտնվող բնակելի տան և շենք-շինությունների նկատմամբ կառուցված օրինական բնակելի տուն՝

կիսանկուղ 38.6 քմ կառուցված 1959 թվականին,բնակելի տուն՝ կիսանկուղ 34.7 քմ կառուցված 1959թվականին, բնակելի տուն՝ կիսանկուղ 45.9 քմ կառուցված 1969 թվականին,բնակելի տուն 73.1քմ կառուցված է 1959թ., բնակելի տուն 32.2քմ կառուցված 1969թ.,բնակելի տուն 22.1քմ կառուցված 1969թ., աստիճանավանդակ 5.5քմ կառուցված է 1959թ., բաց պատշգամբ 12.6քմ կառուցված 1959թ., պարիսպ 1.1քմ կառուցված 1999թ., պարիսպ 1.6քմ կառուցված 1999թ.,պարիսպ 2.6քմ կառուցված է 2014թ., պարիսպ 1.0քմ կառուցված է 2014թ., պարիսպ 3.2քմ կառուցված է 2014թ., պարիսպ 2.0քմ կառուցված է 2014թ., պարիսպ 9.1քմ կառուցված է 2015թ.:

2.Ինքնակամ կառուցված բնակելի տուն կիսանկուղ 48.0քմ կառուցված է 2014թ., բնակելի տուն 45.5քմ կառուցված է 2014թ., աստիճանավանդակ 7.4քմ կառուցված է 2014թ., ծածկ 56.0քմ կառուցված է 2014թ., զուգարան 2.1քմ կառուցված է 2010թ.:

3.Տնամերձին կից ավել օգտագործվող 0.0032 հա հողամասը անհատույց հատկացնել սեփականության իրավունքով:

4. Առաջարկել Հայաստանի Հանրապետության կառավարությանը առընթեր անշարժ գույքի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանմանը գրանցել քաղաքացի՝Արա Արտավազդի Ալեքսանյանի սեփականության իրավունքները սույն որոշման 1-ին և 2-րդ կետում նշված, հողամասի, բնակելի տան և շենք-շինությունների նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՔԱԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2016թ.Մայիսի 26,
գ.Բամբակաշատ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բամբակաշատ, (0237)79299, bambakashat.armavir@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 մայիսի 2016թվականի N 31

## ՇԵՆՔ_ՇԻՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանափոխման, անշարժ գույքի` ըստ դրանց գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի սեպտեմբերի 13-ի «Համայնքային նշանակության փողոցների վերանվանման մասին» թիվ 01 որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ`

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքի բնակիչ Սոնիկ Վարդգեսի Համբարձումյանին առանձնացված տնամերձ հողամասին /ծածկագիր 0039-0009/ և շինությանը տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայքի կենտրոնական փողոց, թիվ 45/1 շինության:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանում` պետական գրանցման համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` ԱՐԲԱԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2016թ.Մայիսի 27,
գ.Բամբակաշատ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բամբակաշատ, (0237)79299, bambakashat.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 մայիսի 2016թվականի N 32

## ՕՐԻՆԱԿԱՆ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ՄԻՆՉԵՎ 20% ԱՎԵԼ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Բամբակաշատ համայնքի բնակիչ Արա Արտավազդի Ալեքսանյանին 1991թվականի սեփականաշնորհման հանձնաժողովի թիվ 02 որոշմամբ հատկացվել է 0.10հա տնամերձ հողամաս: Քարտեզագրման և գույքագրման ժամանակ տնամերձի փաստացի մակերեսը կազմել է 0.12հա, տնամերձ հողամասին կից ավել զբաղեցրած 0.02հա հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը,չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունքի և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետով ՏԻՄ-ի Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 32-րդկետով և հիմք ընդունելով Արա Ալեքսանյանի դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Օրինական տնամերձ հողամասին կից ավել զբաղեցրած 0.02հա հողամասը անհատույց սեփականության իրավունքով տրամադրել Արա Ալեքսանյանին /ծածկագիր 0100-0008/:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԲԱԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2016թ.Մայիսի 27,
գ.Բամբակաշատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բամբակաշատ, (0237)79299, bambakashat.armavir@mta.gov.am

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

31 մայիսի 2016թվականի N 04

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային հողային օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 12 ապրիլի 2001թվականի թիվ 286 որոշմամբ հաստատված Կարգի 49-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2016 թվականի մայիսի 23-ի թիվ 12-Ն որոշումը

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Ստեղծել համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձակալությամբ տրամադրման մրցույթային հանձնաժողով համաձայն հավելվածի
2. Մրցույթային հանձնաժողովը ընդգրկել համայնքի ավագանու անդամների
3. Հանձնաժողովին /Ա. Եղիազարյան/ Հայաստանի Հանրապետության հողային օրենքով և այլ նորմատիվ ակտերով սահմանված կարգով իրականացնել համայնքի ավագանու 2016թվականի մայիսի 23-ի թիվ 12 որոշման իրականացման համար անհրաժեշտ գործառույթները
4. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԲԱԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2016թ.Մայիսի 31,
գ.Բամբակաշատ

ՀԱՎԵԼՎԱԾ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-Ի ԹԻՎ 04 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ԿԱԶՄԸ

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ գյուղապետ՝ | Ա.Եղիազարյան |
| աշխ.քարտուղար | Ս. Մարտիրոսյան |
| առաջատար մասնագետ | Ռ. Ավետիսյան |
| ավագանու անդամներ | Գ. Տեր-Գեղամյան |
| ավագանու անդամներ | Ն.Մկրտչյան |

Աշխատակազմի քարտուղար՝ Ս. Մարտիրոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բամբակաշատ, (0237)79299, bambakashat.armavir@mta.gov.am

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

10 մայիսի 2016թվականի N 03

## ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ «ՋՐԱԾԱԾԿՄԱՆ ՎՏԱՆԳԻ ՄԱՍԻՆ»

Համաձայն Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2016թվականի հիմնական միջոցառումների պլանի 9.1.4 կետի պահանջներին, իմ ղեկավարությամբ Բամբակաշատ համայնքում 25.05.2016թվականին անցկացվելու է շտաբային ուսումնավարժություն՝ «Ջրածածկման վտանգի դեպքում համայնքի բնակչության պաշտպանության կազմակերպումը» թեմայով:

Նշված ուսումնավարժությանը ժամանակին նախապատրաստվելու և արդյունավետ անցկացնելու նպատակով

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. 2016 թվականի մայիսի 25-ին Բամբակաշատ գյուղի համայնքապետարանում իմ ղեկավարությամբ անցկացվելու է շտաբային ուսումնավարժություն՝ «Ջրածածկման վտանգի դեպքում համայնքի բնակչության պաշտպանության կազմակերպումը» թեմայով

2. Շտաբային ուսումնավարժությանը ներգրավել համայնքի ղեկավարին, կազմել տարհանման հանձնաժողով, հետախուզական, փրկարարական, բժշկակական կազմավորումներ:

3. ՈՒսումնավարժության ղեկավարի տեղակալ նշանակել համայնքապետի տեղակալ Սպարտակ Եղիկյանին:

4. ՈՒսումնավարժության ղեկավարի տեղակալին՝ Սպարտակ Եղիկյանին, մինչև մայիսի 9-ը մշակել և իմ հաստատմանը ներկայացնել ուսումնավարժության նախապատրաստման և անցկացման փաստաթղթերը և մինչև մայիսի 23-ը զեկուցել ուսումնավաժությանը պատրաստ լինելու մասին:

5. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԲԱԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2016թ.Մայիսի 10,
գ.Բամբակաշատ